ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻ՝ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սարգիս Հայոցյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, ք. Մյունխեն, Բեռլին, Լայպցիգ, հունիսի 18-ից 22-ը, 2024 թվական

4. Հրավիրող կողմը

Կազմակերպվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանության միջոցով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մանսակցություն «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում Գերմանիայի Դաշնային Հանրապետության համապատասխան կառույցների հետ համագործակցային ուղղությունների քննարկմանը

6. Քննարկված թեմաները

1. «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում տեխնոլոգիական և սպայական կլաստերների կոնցեպտների համատեղ մշակման հնարավորության հարցերը,
2. Հայաստանի և Գերմանիայի բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև համագործակցության հնարավորությունների զարգացում, ինչպես նաև համատեղ վերապատրաստման և հետազոտական ծրագրերի, կարճատև և երկարատև միջբուհական համատեղ նախագծերի մշակման և իրականացման հնարավորությունները,
3. Հայաստանում բիզնես վարչարարության մագիստրոսական կրթական ծրագրի իրականացման հնարավորությունը,

4. Ավարտական փաստաթղթերի ճանաչման, կադրերի պատրաստմանն ու վերջիններիս շարժունությանն ուղղված ծրագրերի իրականացում,
5. Էներգետիկ ոլորտում համատեղ գիտական հետազոտությունների, կլիմայի փոփոխությունների և արհեստական բանականությանը միտված ուսումնասիրությունների իրականացում,
6. Ամառային դպրոցների փոխանակման ծրագրերի անցկացում՝ ներգրավելով երիտասարդ հետազոտողներին և գիտնականներին,
7. Այլ ընթացիկ հարցեր:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը շրջայց է կատարել Մյունխենի տեխնիկական համալսարանում (TUM), հանդիպել է համալսարանի նախագահ Վոլֆգանգ Հերմանի և «Էներգիայի հետազոտություն» ծրագրի ղեկավար Ռոբերտ Շմիդթի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և «Մյունխենի տեխնիկական համալսարան-միջազգային» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագրով ամրագրված համագործակցության զարգացման հետագա քայլերը, համալսարանի կառուցվածքի և կառավարման մոդելի հիման վրա «Ակադեմիական քաղաք» ծրագրի տեխնոլոգիական կլաստերի կոնցեպտի համատեղ մշակման, ինչպես նաև Հայաստանի ոլորտային բուհերի հետ համատեղ վերապատրաստման և հետազոտական ծրագրերի, կարճատև և երկարատև միջբուհական համատեղ նախագծերի մշակման և իրականացման հնարավորությունները: ՀՀ պատվիրակությունն այցելել է տեխնոլոգիական կենտրոն, ուսումնասիրել բիզնեսի հետ համագործակցության մյունխենյան փորձը, ինչպես նաև հանդիպել տեղի հայ ուսանողների հետ, ծանոթացել նրանց փորձառությանը: Քննարկվել է նաև վերջիններիս՝ «Ակադեմիական քաղաք» ծրագրում ներգրավելու հնարավորությունը՝ ՀՀ բուհերի սովորողների հետ փորձի փոխանակման նպատակով:

Բունդեսվեհրի համալսարանի փոխնախագահ, պրոֆեսոր Կառլ Հայնց Ռեննների հետ քննարկվել են «Ակադեմիական քաղաք» ծրագրի սպայական կլաստերի կոնցեպտի համատեղ մշակման հնարավորությունը, սպայական կլաստերի շրջանակում Բունդեսվեհրի համալսարանի կառավարման մոդելի ներդրման մեխանիզմները, ինչպես նաև կադրերի պատրաստման, վերապատրաստման, համատեղ կրթական և հետազոտական ծրագրերի իրականացման հնարավորությունները: Այցի շրջանակում ներկայացվել են Բունդեսվեհրի համալսարանի կրթական ծրագրերն ու առանձնահատկությունները, որից հետո կազմակերպվել է շրջայց կամպուսում:

Սարգիս Հայոցյանը հանդիպել է Բեռլինի կառավարման և տեխնոլոգիաների եվրոպական դպրոցի (ESMT Berlin) ղեկավար Յորգ Ռոխոլի և «Մատենա» բիզնես դպրոցի ղեկավար Ռուբեն Հայրապետյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանում EMBA՝ Բիզնես վարչարարության մագիստրոսական կրթական ծրագրի իրականացման հնարավորությունները և դասախոսների վերապատրաստմանն առնչվող հարցեր: Յորգ Ռոխոն պատրաստակամություն է հայտնել դիտարկելու համագործակցության հնարավորությունն «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում:

«Մշակույթի նախարարների համաժողովի» գլխավոր քարտուղար Ուդո Միխալիկի հետ հանդիպմանը քննարկվել են ավարտական փաստաթղթերի ճանաչման, Հայաստանի և Գերմանիայի բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև համագործակցության հնարավորությունների զարգացման, մասնագիտական վերապատրաստումների իրականացմանն առնչվող հարցեր: Առաջարկվել է վերաբացել Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Ակադեմիական Փոխանակման Ծառայության գրասենյակը (DAAD):

Սարգիս Հայոցյանը հանդիպել է Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (BMZ) խորհրդարանական պետքարտուղար Նիլս Անենի հետ: Քննարկվել են դուալ կրթության ոլորտում կարողությունների զարգացման ուղղությամբ սերտ փոխգործակցությունը, այդ թվում՝ մասնավոր ոլորտի ներգրավման միջոցով:

«HELMHOLTZ» ընկերության նախագահ Օթմար Վիսթլերի հետ քննարկվել են երկկողմ համագործակցության հնարավորությունները, մասնավորապես՝ էներգետիկ

ոլորտում համատեղ գիտական հետազոտությունների, կլիմայի փոփոխությունների և արհեստական բանականությանը միտված ուսումնասիրությունների ուղղությամբ: Հանդիպմանն անդրադարձ է եղել «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում «HELMHOLTZ» գիտահետազոտական ընկերության կառավարման մոդելի ներդրման հնարավորությունների, համատեղ հետազոտական լաբորատորիների ստեղծման, համատեղ հետազոտական ծրագրերի իրականացման հնարավորություններին: Գերմանական կողմն առաջարկել է նաև ամառային դպրոցների փոխանակման ծրագրերի անցկացում՝ ներգրավելով երիտասարդ հետազոտողներին և գիտնականներին:

«Fraunhofer» ինստիտուտի ներկայացուցիչ Բերթրամ Նիկոլայի հետ քննարկվել են «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում «Fraunhofer» ինստիտուտի հետ համագործակցության զարգացման և համատեղ լաբորատորիների ստեղծման հնարավորությունները:

Սարգիս Հայոցյանը հանդիպել է նաև Լայպցիգի քաղաքապետ Բուրքարդ Յունգի հետ: Հանդիպման ընթացքում կարևորվել է երկկողմ կապերի զարգացումը, մասնավորապես մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև փոխանակման ծրագրերի իրականացումը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Սարգիս Հայոցյանի՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն գործուղման արդյունքում ձեռք են բերվել են հետևյալ պայմանավորվածությունները՝

- «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում «HELMHOLTZ» գիտահետազոտական ընկերության հետ էներգետիկ ոլորտում համատեղ գիտական հետազոտությունների, կլիմայի փոփոխությունների և արհեստական բանականությանը միտված ուսումնասիրությունների իրականացում, ամառային դպրոցների փոխանակման ծրագրերի անցկացում՝ ներգրավելով երիտասարդ հետազոտողներին և գիտնականներին,
- Բունդեսվեհրի համալսարանի հետ «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում սպայական կլաստերի կոնցեպտի համատեղ մշակում,
- Լայբնիցի գիտահետազոտական ինստիտուտի Արևելյան Եվրոպայի պատմության և մշակույթի ինստիտուտի և Բարձրագույն կրթության և գիտության

կոմիտեի միջև հայագիտության բնագավառում փոխըմբռնման հուշագրի կնքում, ինչպես նաև համատեղ հետազոտական ծրագրերի իրականացում և կադրերի պատրաստում,

- Պոտսդամի Լեփսիուսի տուն-թանգարանի ինստիտուտի հետ ցեղասպանագիտության ոլորտում համագործակցություն, գիտնականների շարժունություն և կադրերի պատրաստում:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Վերոնշյալ հանդիպումներին ձեռք է բերվել պայմանավորվածություն քննարկումները շարունակելու և հետագայում համագործակցային ծրագրերի իրականացման նպատակով համապատասխան փոխըմբռնման հուշագրերի մշակման վերաբերյալ: Լայբնիցի գիտահետազոտական ինստիտուտի Արևելյան Եվրոպայի պատմության և մշակույթի ինստիտուտի ներկայացուցիչների հետ նախատեսվում է անցկացնել երկկողմ առցանց հանդիպում՝ քննարկելու հայագիտության բնագավառում փոխըմբռնման հուշագրի դրույթները:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Սարգիս Հայոցյան

26.06.2024թ.